ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Օրենսդրական նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հաշտարարության ինստիտուտի բարեփոխման անհրաժեշտությամբ:

2018 թվականին «Հաշտարարության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) ընդունմամբ սահմանվեցին հաշտարարության իրականացման իրավական հիմքերը: Նախատեսվեցին կարգավորումներ՝ ուղղված հաշտարարության իրականացման սկզբունքների, հաշտարարների իրավունքների և պարտականությունների, հաշտարարների արտոնագրման գործընթացի, հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության և վերջինիս կառավարման մարմինների ձևավորման կարգի սահմանմանը: Սակայն իրավակիրառ պրակտիկայի վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ հաշտարարության ինստիտուտի արդյունավետ գործունեության ապահովման նպատակով անհրաժեշտ է մշակել և իրականացնել օրենսդրական բարեփոխումներ:

Մասնավորապես, ներկայումս գործող օրենսդրությամբ սահմանված չէ հաշտարարության առցանց իրականացման հնարավորություն, նախատեսված չեն նաև հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության մարմինների ձևավորման կարգի և լիազորությունների վերաբերյալ հստակ իրավակարգավորումներ, սահմանված

չեն հաշտարարությունը խթանող գործիքակազմեր, նախատեսված չեն նաև հաշտարարին կարգապահական պատասխանատվության ենթարկման հիմքերը, առիթներն ու կարգը և մի շարք այլ հարցեր: Արդյունքում առկա է «Հաշտարարության մասին» օրենքում, ինչպես նաև այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու անհրաժեշտություն:

Նախատեսվող օրենսդրական փոփոխությունները անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետությունում հաշտարարության ինստիտուտի կայացման և զարգացման, ինչպես նաև դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման համար: Այս առումով կարևոր է նշել, որ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1441-Լ Կառվարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության Հավելված 1-ով հաստատված «Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում» վերնագրված ռազմավարական նպատակի շրջանակներում ևս կարևորվել է հաշտարարության ինստիտուտի զարգացման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետությունում: Նշված մոտեցումը պահպանվել է նաև 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ Կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությամբ: Հարկ է նաև նշել, որ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման Հավելված 1-ում, անդրադառնալով «Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում» թիվ 8-րդ նպատակի հիմնավորմանը, նշվել է, որ առաջարկվող միջոցառումները պայմանավորված են դատարանների ծանրաբեռնվածության թեթևացման, գործերի քննության ժամկետների կրճատման, ինչպես նաև վեճի՝ կողմերի համար վեճերի առավել ճկուն և միաժամանակ մատչելի և արդյունավետ եղանակով լուծման մեխանիզմներ նախատեսելու անհրաժեշտությամբ: Նշվել է նաև, որ ներկայումս առկա չեն առցանց հաշտարարության, որոշակի վեճերի դեպքերում (օրինակ՝ ընտանեկան գործերով վեճերով) պարտադիր հաշտարարության վերաբերյալ իրավակարգավորումներ, ինչը նույնպես իր բացասական ազդեցությունն է ունենում վերոնշյալ խնդիրների վրա: Իր հերթին, նշված խնդիրների

լուծման նպատակով, ակնկալվում է, որ անհրաժեշտություն կառաջանա ավելացնելու հաշտարարների թիվը, ինչով պայմանավորված հարկ է վերանայել նոր հաշտարարների ներգրավման, ուսուցման, ռեեստրի վարման և ընտրության իրավական մեխանիզմները: Միաժամանակ, բավարար կարգավորված չեն հաշտարարների որակավորման և վերապատրաստման ընթացակարգերը: Փաստաթղթով առաջարկվում է փոփոխություններ կատարել «Հաշտարարության մասին» օրենքում՝ նախատեսելով դրույթներ առցանց հաշտարարության, իսկ որոշ դեպքերում (օրինակ՝ ընտանեկան գործերով վեճերով) նաև՝ պարտադիր հաշտարարության վերաբերյալ, ինչպես նաև նախատեսել հաշտարարության ոլորտի հարաբերությունների զարգացմանն ուղղված այլ իրավակարգավորումներ, մասնավորապես, նոր հաշտարարներ ներգրավելու վերաբերյալ:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ օրենսդրական նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության և Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի դրույթների իրագործման անհրաժեշտությամբ:

Հիմք ընդունելով վերոնշյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը՝ ««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի մշակման նպատակն է հաշտարարության ինստիտուտի՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային եղանակի, բարեփոխումը և զարգացումը:

1.1. <u>Առցանց հաշտարարության ներդնում</u>

Ներկայումս Օրենքում առկա չեն առցանց հաշտարարության վերաբերյալ իրավակարգավորումներ: Սակայն միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունից կարող ենք եզրակացնել, որ հաշտարարությունն առցանց իրականացնելու հնարավորությունը որոշ դեպքերում թույլ է տալիս գործընթացը կազմակերպել առավել արագ և արդյունավետ՝ հատկապես այն դեպքերում, երբ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված կողմերից որևէ մեկն ի վիճակի չէ մասնակցելու հաշտարարությանը այլ եղանակով:

Այսպես, ավանդաբար հաշտարարությունն իրականացվում է դեմ առ դեմ սկզբունքով, սակայն որոշ դեպքերում կողմերի համար կարող է շահավետ լինել էլեկտրոնային միջոցների կիրառումը: Հիմնավոր դիտարկելով վկայակոչված փաստը՝ որոշ միջազգային փաստաթղթերում ողջունվում է հաշտարարություն իրականացնելիս էլեկտրոնային գործիքների կիրառումը: Որպես օրինակ հարկ է վկայակոչել ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (ՅՈՒՆՍԻՏՐԱԼ) կողմից ընդունված «Վեճերի առցանց լուծման տեխնիկական կարգը» (այսուհետ նաև՝ Կարգ)[1]:

Վկայակոչված փաստաթղթի նախաբանում նշված է, որ միջպետական առցանց գործարքների կնքման աճը հանգեցնում է այդպիսի գործարքներից ծագող վեճերի առցանց լուծման հնարավորության անհրաժեշտությանը, և դրանով իսկ պայմանավորված՝ ՅՈՒՆՍԻՏՐԱԼԻ 43-րդ նիստը նվիրված է վեճերի առցանց լուծմանը[2]: Փաստաթղթում նշված է, որ առցանց գործարքների կնքման թվի աճին զուգահեռ անհրաժեշտ են մեխանիզմներ, որոնք կլուծեն այդպիսի գործարքների արդյունքում ծագած վեճերը: Այդպիսի մեխանիզմներից է վեճերի առցանց լուծումը, որի միջոցով կողմերը հնարավորություն են ստանում պարզ և արագ լուծելու վեճը ճկուն եղանակով, առանց հանդիպմանը կամ լսումներին վերջիններիս ֆիզիկական ներկայության անհրաժեշտության[3]: Վեճերի առցանց կարգավորումը այս փաստաթղթում բնորոշվում է որպես էլեկտրոնային հաղորդակցության և այլ տեխնոլոգիական միջոցներով վեճերի կարգավորման մեխանիզմ[4]:

Հարկ է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք երկրների օրենսդրությամբ ևս նախատեսված է առցանց հաշտարարության իրականացման հնարավորություն:

Իսպանիայում առցանց հաշտարարության վերաբերյալ իրավակարգավորումները նախատեսված են «Քաղաքացիական և առևտրային գործերով հաշտարարության մասին»

---

[1] Տե՛ս UNCITRAL Technical Notes on Online Dispute Resolution, New York: United Nations, 2017 [accessed: 2019-03-10],https://uncitral.un.org/sites/uncitral.un.org/files/media-documents/uncitral/en/v1700382_english_technical_notes_on_odr.pdf 24.12.2021թ. դրությամբ:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 5:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 15:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 18:

օրենքում[5]: Նշված օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ կողմերի համաձայնության առկայության պարագայում հաշտարարությունը կամ այդ գործընթացի մի մասը կարող է իրականացվել էլեկտրոնային եղանակով՝ տեսակոնֆերանսի կամ ձայնի կամ պատկերի այլընտրանքով, պայմանով, որ կերաշխավորվեն կողմերի ինքնությունը հաստատելու պայմանները և օրենքի հիմնական պահանջների պահպանումը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 600 եվրոն չգերազանցող պահանջների դեպքում հաշտարարությունը իրականացվում է գլխավորապես առցանց եղանակով, բացառությամբ այն դեպքերի, երբ առցանց իրականացումը անհնար չէ կողմերից մեկի համար[6]:

Իտալիային թեև առցանց հաշտարարության ինստիտուտը հայտնի է վաղուց, սակայն այն լայնորեն չի կիրառվում: Պատճառն այն է, որ հաշտարարական ծառայություններ մատուցող միայն մեծ ընկերություններն են, որ ունակ են իրականացնելու առցանց հաշտարարություն՝ հատուկ մշակված հարթակի միջոցով: Կարևոր է նշել, որ առցանց հաշտարարության իրականացման նպատակով կազմակերպությունը պետք է մշակի հատուկ ծրագիր, որը պետք է համապատասխանի Արդարադատության նախարարության կողմից սահմանված բոլոր չափանիշներին, այդ թվում՝ անվտանգության մասով: Արգելվում է առցանց հաշտարարության իրականացումը այնպիսի հարթակների միջոցով, ինչպիսին է Skype-ը կամ այլ նմանատիպ հարթակները[7]:

Իտալիայում որոշ կազմակերպություններ մասնագիտանում են խոշոր կազմակերպությունների համար առցանց հաշտարարության հարթակների ստեղծման ոլորտում: Նշված համակարգերը հատկապես օգտագործվում են հաշտարարության հիմքը հանդիսացող գործողությունները՝ հաշտարարության իրականացման պահանջի ներկայացումը, փաստաթղթերի տրամադրումը և այլն, ավտոմատացնելու նպատակով[8]: Կարևոր է նաև նշել, որ Իտալիայում տարածում է գտնում նաև Եվրոպական

---

[5] Տե՛ս Law/5 2012 , on 6 July, Mediation on Civil and Commercial Matters, հղումը՝ https://www.global-regulation.com/translation/spain/1433974/law-5-2012%252c-on-6-july%252c-mediation-in-civil-and-commercial-matters.html 24.12.2021թ. դրությամբ:

[6] Տե՛ս նույն տեղում:

[7] Mediation in Italy, Alessandro Bruni Concilia LLC, Lecology, 2019 9 September, հղումը՝ https://www.lexology.com/library/detail.aspx?g=d0faf894-e442-46f9-9fee-dfb1f78ddd4a :

[8] Տե՛ս նույն տեղում:

հանձնաժողովի կողմից տրամադրված առցանց հարթակի օգտագործումը, սակայն հարթակից օգտվելու համար հարկ է պետական մարմնում հավատարմագրվել[9]:

Եվրոպական հանձնաժողովի տրամադրած հարթակից օգտվելու հնարավորության մասին նշված է նաև Իտալիայի Տնտեսության զարգացման նախարարության պաշտոնական կայքում[10]: Մասնավորապես, նշված է, որ եթե վեճը վերաբերում է առցանց գնված ապրանքին կամ մատուցված ծառայությանը, ապա սպառողները կարող են բողոք ներկայացնել Եվրոպական հանձնաժողովի կողմից կառավարվող վեճերի առցանց կարգավորման հարթակում: Վկայակոչված գործընթացը կարգավորված է Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված N 524/2013 կարգավորմամբ[11]:

Ամփոփելով ՝ հարկ է նշել, որ, հիմնվելով նաև լավագույն միջազգային փորձի վրա, Օրենքի նախագծով առաջարկվում է նախատեսել առցանց հաշտարարության իրականացման վերաբերյալ իրավակարգավորումներ՝ հնարավորություն վերապահելով կողմերին իրենց հասանելի տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, այդ թվում՝ տեղեկատվական և հեռահաղորդակցային տարբեր հասանելի տեխնոլոգիաների զուգակցմամբ իրականացնելու հաշտարարություն:

1.2. <u>Որոշ ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարության նախատեսում և անվճար չորս ժամ հաշտարարությունից հրաժարում</u>

Ներկայումս օրենսդրությամբ նախատեսված չեն պարտադիր հաշտարարության վերաբերյալ իրավակարգավորումներ: Օրենքի նախագծով առաջարկվել է ամուսնալուծության, երեխայի բնակության վայրի որոշման, ալիմենտի (ապրուստավճար) բռնագանձման, ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման, ծնողական իրավունքների իրականացման, երեխայի մերձավոր ազգականների՝ երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու, երեխայի տեսակցության կարգ սահմանելու, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ գործերով մինչև

[9] Տե՛ս նույն տեղում:
[10] Տե՛ս https://www.mise.gov.it/index.php/en/201-contents/2040874-dispute-resolution-frequently-asked-questions-faq 24.12.2021 դրությամբ:
[11] Տե՛ս https://www.mise.gov.it/index.php/en/201-contents/2040874-dispute-resolution-frequently-asked-questions-faq 24.12.2021 դրությամբ:

դատարան դիմելը նախատեսել պարտադիր հաշտարարության պահանջ, ինչը զգալիորեն կթեթևացնի դատարանների ծանրաբեռնվածությունը՝ հաշվի առնելով այն հավանականությունը, որ այս փուլում վեճը կավարտվի կողմերի հաշտությամբ:

Հարկ է նկատել, որ լավագույն միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության պահանջ նախատեսելու հնարավորության մասին:

Այսպես, Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից հրապարակված «Հաշտարարության ոլորտում օրինաստեղծ գործունեության եվրոպական ձեռնարկ» փաստաթղթում (այսուհետ նաև՝ ձեռնարկ)[12] ի թիվս այլ հարցերի անդրադարձ է կատարվել նաև պարտադիր հաշտարարությանը: Մասնավորապես, ձեռնարկում առաջարկվում է նախնական հաշտարարությանը դիմած լինելը սահմանել որպես դատարան դիմելու պայման: Նշվածի համատեքստում առաջարկվում է՝

ա) կողմերի համար սահմանել հաշտարարի հետ առաջին հանդիպմանը կամ հաշտարարի հետ տեղեկատվական հանդիպմանը մասնակցելու պարտականություն՝ կողմերի համաձայնության առկայության դեպքում ապահովելով նույն նիստի ընթացքում հաշտարարությունը շարունակելու հնարավորություն,

բ) նախատեսել հաշտարարի հետ նախնական հանդիպումից հետո առանց պատճառաբանություններ ներկայացնելու հաշտարարության իրականացումից կողմերի հրաժարվելու հնարավորություն,

գ) ընդգծել, որ կողմերը չեն կարող պարտադրվել հաշտություն կնքել,

դ) որոշակի տեսակի վեճերի համար հաշտարարի հետ նախնական հանդիպմանը մասնակցելը դիտարկել որպես դատարան դիմելու պայման: Առաջարկվում է նման վեճերի շրջանակներում ներառել **առնվազն ընտանեկան**, աշխատանքային, համատեղ սեփականության և հարևանային իրավունքին վերաբերող վեճերը,

[12] Տե՛ս European Commission for the Efficiency of Justice (CEPEJ): European Handbook for Mediation Lawmaking, As adopted at the 32th plenary meeting of the CEPEJ Strasbourg, 13 and 14 June 2019, 14 June 2019, https://rm.coe.int/cepej-2019-9-en-handbook/1680951928 27.12.2021 դրությամբ:

ե) ապահովել, որ նախնական հաշտարարությանը մասնակցելու պայմանը չհանգեցնի էական ծախսերի առաջացմանը և դատարան դիմելու իրավունքի իրացման ուշացմանը,

զ) ապահովել ընթացակարգային երաշխիքները (…),

է) հստակ նշել, թե երբ նախնական հաշտարարության դիմած լինելու պայմանը կհամարվի պահպանված և թե երբ կողմերը կկարողանան դիմել դատարան,

(…)[13]:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ ձեռնարկում Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի կողմից առաջարկվում է որոշ տեսակի վեճերի դեպքում (այդ թվում՝ ընտանեկան) սահմանել նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարության պահանջ:

Հարկ է նաև նկատել, որ նախքան դատարան դիմելը վեճի լուծման արտադատական պարտադիր կարգ նախատեսելը քննարկվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ): Այսպես, ըստ Momčilović ընդդեմ Խորվաթիայի գործի փաստական հանգամանքների՝ Խորվաթիայի օրենսդրությամբ նախատեսված է եղել նախքան պետությունից վնասի փոխհատուցում պահանջող հայց ներկայացնելը վեճը հաշտությամբ կարգավորելու նպատակով Գլխավոր դատախազություն դիմելու պարտադիր պայման[14]: Սույն գործով ՄԻԵԴ-ի կողմից արձանագրվել է, որ անմիջապես դատարան դիմելու իրավունքի սահմանափակումը հետապնդել է օրինական նպատակ, այն է՝ նպաստել դատական ծախսերի տնտեսմանը և հնարավորություն տալ կողմերին արդյունավետորեն լուծել վեճը առանց դատարանի ներգրավման[15]: ՄԻԵԴ-ի կողմից նաև արձանագրվել է, որ Գլխավոր դատախազության հետ հաշտություն չկնքելու դեպքում կողմերը ազատ են եղել իրավասու դատարան հայց ներկայացնելու հարցում[16]: Արդյունքում ՄԻԵԴ-ի կողմից արձանագրվել է, որ դիմումատուի՝ արդար դատաքննության

[13] Տե՛ս European Commission for the Efficiency of Justice (CEPEJ): European Handbook for Mediation Lawmaking, As adopted at the 32th plenary meeting of the CEPEJ Strasbourg, 13 and 14 June 2019, 14 June 2019, էջ 20, https://rm.coe.int/cepej-2019-9-en-handbook/1680951928 27.12.2021 դրությամբ:

[14] Momčilović v. Croatia, no. 11239/11, 26 March 2015, կետ 24, https://hudoc.echr.coe.int/eng?i=001-152990 27.12.2021 դրությամբ

[15] Տե՛ս նույն տեղում, կետ 46:

[16] Տե՛ս նույն տեղում, կետ 52:

իրավունքը խախտված չէ, քանի որ վերջինս կարող էր վեճի լուծման արտադատական կարգը պահպանելուց հետո դիմել դատարան[17]:

Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների պարտադիրությանը անդրադարձ է կատարվել նաև Եվրոպական միության թիվ 2013/11/EU դիրեկտիվում: Մասնավորապես, նշված փաստաթղթում արձանագրվել է, որ դիրեկտիվով չի արգելվում վեճերի այլընտրանքային լուծման եղանակներին վաճառողների[18] պարտադիր մասնակցության պահանջ սահմանելը՝ պայմանով, որ արդյունքում ներպետական օրենսդրությամբ կողմերը չզրկվեն Մարդու հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիայի 47-րդ հոդվածով սահմանված դատարան դիմելու իրավունքից[19]:

Ուսումնասիրելով պարտադիր հաշտարարության ինստիտուտի ներդրման միջազգային փորձը՝ հարկ է անդրադառնալ նաև այն երկրների փորձին, որտեղ նման կառուցակարգեր արդեն իսկ նախատեսված են:

Այսպես, **Նորվեգիայում** մինչև 16 տարեկան երեխա ունեցող ամուսինների/համատեղ բնակվող անձանց ամուսնալուծության/բաժանության դեպքում սահմանվում է 1 ժամ տևողությամբ պարտադիր հաշտարարություն: Հաշտարարությունը հնարավոր է երկարաձգել ևս 7 ժամով: Հաշտարարության նպատակը ծնողներին աջակցելն է հնարավորինս արդյունավետ պայմանավորվածության գալ երեխայի խնամքի, երեխային տեսակցության, ալիմենտի չափի և այլ հարցերի վերաբերյալ: Հաշտարարությունը նաև պարտադիր է մինչև դատարան դիմելը՝ երեխայի խնամքի և տեսակցության վերաբերյալ վեճերով[20]: Նշենք, որ հաշտարարությունը իրականացվում է պետության կողմից ֆինանսավորվող կենտրոնների կողմից, հաշտարարի հետ թվով մինչև 7 հանդիպումները

[17] Տե՛ս նույն տեղում, կետ 57:

[18] Խոսքը սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում ծագող վեճերի մասին է:

[19] DIRECTIVE 2013/11/EU OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 21 May 2013 on alternative dispute resolution for consumer disputes and amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2009/22/EC, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32013L0011&from=EN կետ 49, երրորդ նախադասություն:

[20] Տե՛ս Thørnblad R., Strandbu A. (2018) The Involvement of Children in the Process of Mandatory Family Mediation. In: Nylund A., Ervasti K., Adrian L. (eds) Nordic Mediation Research. Springer, Cham. https://doi.org/10.1007/978-3-319-73019-6_10 , 28.12.2021 դրությամբ, էջ 184:

անվճար են կողմերի համար, իսկ առաջին հանդիպումը պարտադիր է[21]: Հարկ է նաև նշել, որ, ըստ «Վեճերի մասին» Նորվեգիայի օրենքի, գույքային պահանջների դեպքում նախքան դատարան դիմելը դրանք պետք է քննվեն հաշտարարական խորհրդի կողմից, բացառությամբ դեպքերի, երբ պահանջի չափը կազմում է առնվազն 125 000 նորվեգական կրոն և երկու կողմերն էլ փաստաբան ունեն[22]:

Իտալիայում ևս մի շարք գործերով սահմանված է պարտադիր հաշտարարության պահանջ: Այսպես, ըստ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված «Դատական համակարգի գնահատում (2018-2020)» զեկույցի, Իտալիայում ևս որոշ գործերով մինչև դատարան դիմելը սահմանված է պարտադիր հաշտարարության պահանջ: Նման գործերի թվում են գույքային իրավունքների, կոնդոմինիումների, ակտիվների բաժանման, ժառանգության և կտակի, ընտանեկան գործարքների և համաձայնագրերի, վարկերի, գործարարական նպատակներով վարձակալության, բժշկական սխալի արդյունքում պատճառված վնասի, զրպարտության, ապահովագրական, բանկային և ֆինանսական գործարքների հետ կապված վեճերը[23]:

Խորվաթիայում, ըստ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված «Դատական համակարգի գնահատում (2018-2020)» զեկույցի, Խորվաթիայի Հանրապետության կամ պետական կառավարման մարմինների դեմ քաղաքացիական գործերով նախքան դատարան դիմելը սահմանված է պարտադիր հաշտարարության պահանջ[24]:

Մոնտենեգրոյում, ըստ «Հաշտարարության և ընտանեկան իրավունքի մասին» օրենքի, ամուսնալուծության ընթացքում կողմերի ներկայացրած պահանջները նախքան դատարան

[21] Տե՛ս Shelby Higgs Howarth* and Catherine Caruana, Mandatory mediation in family law – a review of the literature https://csrm.cass.anu.edu.au/sites/default/files/docs/2019/2/CSRM_WP2_2017_60ICERT_APPENDIX_A.pdf , 04.01.2021 դրությամբ, էջ 3:

[22] Տե՛ս European Commission for the Efficiency of Justice (CEPEJ): Evaluation of the judicial systems (2018 - 2020) Norway, https://rm.coe.int/en-norway-2018/16809fe2e8 , 28.12.2021 դրությամբ, էջ 80

[23] Տե՛ս European Commission for the Efficiency of Justice (CEPEJ): Evaluation of the judicial systems (2018 - 2020) Italy, https://rm.coe.int/en-italy-2018/16809fe311 27.12.2021 դրությամբ, էջ 81:

[24] Տե՛ս Տե՛ս European Commission for the Efficiency of Justice (CEPEJ): Evaluation of the judicial systems (2018 - 2020) Croatia, https://rm.coe.int/en-croatia-2018/16809fe338 28.12.2021 դրությամբ, էջ 87:

դիմելը պետք է քննվեն հաշտարարի կողմից, բացառությամբ դեպքերի, երբ առկա են ընտանեկան բնության մասին վկայող հանգամանքներ[25]:

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ կարող ենք փաստել, որ որոշ գործերով մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության պահանջ նախատեսելը ամրագրված է մի շարք միջազգային փաստաթղթերով և տարբեր երկրների օրենսդրությամբ: Կարևոր է նշել, որ պարտադիր հաշտարարության պահանջի սահմանումը հնարավորություն է տալիս որոշակիորեն թեթևացնելու դատական համակարգի ծանրաբեռնվածությունը, քանի որ հավանական է, որ կողմերի միջև վեճը կկարգավորվի հենց այս փուլում: Հիմք ընդունելով նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքները՝ օրենսդրական նախագծերի փաթեթով առաջարկվել է որոշ ընտանեկան գործերով նախքան դատարան դիմելը սահմանել պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ:Այս առումով հարկ է անդրադառնալ նաև ներպետական վիճակագրությանը:

Այսպես, համաձայն ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերի քննության վերաբերյալ 2021 թվականի հաշվետվության՝ 2021 թվականի ընթացքում ստացվել է ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ թվով 2819 դատական գործ, որոնցից՝ ամուսնալուծության վերաբերյալ 1471 գործ, ալիմենտի պահանջի վերաբերյալ 531 գործ, ալիմենտի չափը փոփոխելու վերաբերյալ 52 գործ, երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ 207 գործ, երեխայի հետ տեսակցության կարգ որոշելու վերաբերյալ 198 գործ, ամուսինների ընդհանուր գույքը բաժանելու վերաբերյալ 35 գործ: Ընդհանուր առմամբ հաշտության համաձայնության հաստատման հիմքով կարճվել է 153 գործ[26]: Նշենք, որ համաձայն ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերի քննության վերաբերյալ 2020 թվականի հաշվետվության, 2020 թվականի ընթացքում ստացվել է ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ թվով 2558 դատական գործ,

[25] Տե՛ս European Commission for the Efficiency of Justice (CEPEJ): Evaluation of the judicial systems (2018 - 2020) Montenegro, https://rm.coe.int/en-montenegro-2018/16809fe2e4 , 28.12.2021 դրությամբ, էջ 87:

[26] Տե՛ս ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերի քննության վերաբերյալ 2021 թվականի տարեկան հաշվետվություն, https://court.am/hy/statistic-type/21 , 28.02.2022 դրությամն

որոնցից՝ ամուսնալուծության վերաբերյալ 1323 գործ, ալիմենտի պահանջի վերաբերյալ 504 գործ, ալիմենտի չափը փոփոխելու վերաբերյալ 64 գործ, երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ 177 գործ, երեխայի հետ տեսակցության կարգ որոշելու վերաբերյալ 216 գործ, ամուսինների ընդհանուր գույքը բաժանելու վերաբերյալ 21 գործ: Ընդհանուր առմամբ հաշտության համաձայնության հաստատման հիմքով կարճվել է 110 գործ[27]: Համադրելով նշված տվյալները 2019 թվականի հրապարակված վիճակագրության հետ՝ հարկ է նշել, որ 2019 թվականի ընթացքում ստացվել է ընտանեկան իրավահարաբերությունների վերաբերյալ թվով 3300 դատական գործ, որոնցից՝ ամուսնալուծության վերաբերյալ 1697 գործ, ալիմենտի պահանջի վերաբերյալ 667 գործ, ալիմենտի չափը փոփոխելու վերաբերյալ 99 գործ, երեխայի բնակության վայրը որոշելու վերաբերյալ 209 գործ, երեխայի հետ տեսակցության կարգ որոշելու վերաբերյալ 262 գործ, ամուսինների ընդհանուր գույքը բաժանելու վերաբերյալ 33 գործ, ընդհանուր առմամբ հաշտության համաձայնության հաստատման հիմքով կարճվել է 113 գործ[28]:

Հարկ է նաև նշել, որ ներկայումս Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված է դրույթ, որի համաձայն՝ եթե մեծ է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մեկ անգամ կարող է նշանակել մինչև 4 ժամ անվճար հաշտարարություն: Այս փուլում հաշտարարության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական նախագծերի փաթեթով նախատեսվել է, որ հաշտարարության տևողությունը կարող է նախատեսվել առնվազն երկու և առավելագույնը չորս ժամ տևողությամբ: Ինչպես նաև նախատեսվել են հաշտարարի վարձատրության գումարի հատուցման նոր ընթացակարգեր: Այս առումով նշենք, որ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք երկրների օրենսդրությամբ սահմանվել է, որ դատարանի նախաձեռնությամբ նշանակված հաշտարարության դիմաց փոխհատուցումը իրականացվում է պետական բյուջեի

[27] Տե՛ս ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերի քննության վերաբերյալ 2020 թվականի տարեկան հաշվետվություն, https://court.am/hy/statistic-inner/196 , 28.12.2021 դրությամբ:

[28] Տե՛ս ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերի քննության վերաբերյալ 2019 թվականի տարեկան հաշվետվություն https://court.am/hy/statistic-inner/184 , 28.12.2021 դրությամբ:

միջոցների հաշվին: Այսպես, Սլովենիայում դատարանի կողմից փոխհատուցվում է ծնողների և երեխաների, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի լուծումից առաջ եկած վեճերի լուծման նպատակով իրականացված հաշտարարության դիմաց, իսկ այլ վեճերի դեպքում՝ հաշտարարության առաջին երեք ժամի դիմաց (բացառությամբ առևտրային վեճերի, որոնց դեպքում փոխհատուցում չի իրականացվում)[29]: Լիտվայում «Հաշտարարության մասին» օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված է, որ օրենքով պարտադիր հաշտարարություն նախատեսված լինելու դեպքում հաշտարարի՝ առանձնացված ցանկից ընտրված լինելու դեպքում հաշտարարության դիմաց վճարումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական բյուջեից փոխհատուցումն իրականացվում է մինչև 4 ժամ իրականացված պարտադիր հաշտարարության դիմաց: Եթե կողմերը ցանկանում են շարունակել հաշտարարությունը, ապա մնացած ժամանակահատվածի դիմաց հաշտարարի փոխհատուցումն իրականացվում է կողմերի հաշվին: Պետական բյուջեի հաշվին փոխհատուցվում է նաև հաշտարարի՝ հաշտարարությանը պատրաստվելու համար մինչև մեկ ժամ տևողությամբ ժամանակահատվածի և հաշտարարության արդյունքների ամփոփման համար (առավելագույնը մեկ ժամ) իրականացված աշխատանքը[30]:

Ամփոփելով ներկայացված միջազգային փորձի վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ մի շարք երկրներում դատական համակարգի ծանրաբեռնվածության թեթևացման համար արդեն իսկ նախատեսված է վեճերի լուծման արտադատական կարգի պարտադիր պահպանման ենթակա ընթացակարգ, մասնավորապես, պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ:

Վերոգրյալի լույսի ներքո հարկ է նաև անդրադառնալ պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու, ինչպես նաև դատարանի

---

[29] Տե՛ս European Handbook for Mediation Lawmaking , CEPEJ(2019)9 , https://rm.coe.int/cepej-2019-9-en-handbook/1680951928, 04.01.2022, էջ38-39: Տե՛ս նաև The Slovenian Legislation Implementing The EU Mediation Directive https://www.europarl.europa.eu/cmsdata/60662/att_20110518ATT19582-7370855961647064103.pdf 04.01.2021 դրությամբ էջ 11-12:

[30] Տե՛ս Lietuvos Respublikos mediacijos įstatymas, https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.325294/moYUFnhGNH , 04.01.2021 դրությամբ:

նախաձեռնությամբ հաշտարարություն նշանակվելու դեպքում Օրենքի նախագծով սահմանված՝ հաշտարարի վարձատրության գումարի փոխհատուցման կարգին:

Այսպես, Օրենքի նախագծով սահմանվել է, որ եթե օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, ապա մինչև երկու ժամ իրականացված հաշտարարությունը անվճարունակ ֆիզիկական անձանց համար անվճար է: Բացի այդ, ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով սահմանվել է, որ եթե կողմը պարտադիր հաշտարարության իրականացման արդյունքում կնքված հաշտության համաձայնության հաստատման նպատակով դիմում է դատարան, ապա պետական տուրքը նվազեցվում է հաշտարարին վճարած վարձատրության գումարի չափին համամասնորեն (ոչ ավելի քան Կառավարության որոշմամբ սահմանված դրույքաչափի և ոչ պակաս քան բազային տուրքի 10-ապատիկի չափով): Նշենք նաև, որ պարտադիր հաշտարարության իրականացման արդյունքում կողմերի միջև հաշտության համաձայնություն չկնքվելու և վեճը լուծելու նպատակով դատարան դիմելու դեպքում հաշտարարի վարձատրության գումարի ծախսը այն վճարած կողմին պետք է հատուցի այն կողմը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտը: Այս առումով կարևոր է նշել, որ կողմերի համար լրացուցիչ ֆինանսական երաշխիքներ նախատեսելու նպատակով օրենսդրական նախագծերի փաթեթով առաջարկվել է իրավակարգավորում, ըստ որի՝ հայցի մասնակի բավարարման կամ մերժման դեպքում, հաշտարարի վարձատրության գումարը վճարած կողմին հաշտարարության դիմաց վճարած վարձատրության գումարը վերադարձվում է վճարած պետական տուրքից՝ Կառավարության որոշմամբ սահմանված չափով և կարգով: Իսկ եթե հայցվորը օրենքով ազատված է պետական տուրքի վճարումից կամ դատարանը կիրառել է նման արտոնություն, ապա հայցը մերժվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում վերջինիս վճարվում է փոխհատուցում պետական բյուջեից՝ Կառավարության սահմանած չափով և կարգով, մինչև երկու ժամ տևողությամբ իրականացված հաշտարարության դիմաց հաշտարարի վարձատրության գումարի վճարման համար:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ օրենքով պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ նախատեսված լինելու դեպքերում հաշտարարի վարձատրության գումարը

վճարելու դիմաց կողմի փոխհատուցման ընթացակարգերը կներկայացվեն ստորև՝ գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Պարտադիր հաշտարարության իրականացման դեպքում հաշտարարի վարձատրության գումարը վճարած կողմի փոխհատուցումը



Անդրադառնալով դատարանի նախաձեռնությամբ հաշտարարության նշանակման դեպքում հաշտարարի վարձատրության գումարի հատուցմանը՝ նշենք, որ ներկայումս Քաղաքացիական օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումն առ այն, որ մինչև չորս ժամ տևողությամբ նշանակված հաշտարարությունն իրականացվում է անվճար հիմունքներով, չի նպաստում հաշտարարության ինստիտուտի զարգացմանը Հայաստանում: Ավելին, մասնագիտական քննարկումների ընթացքում մի շարք հաշտարարների կողմից նշվում է նման կարգավորումների խնդրահարույց լինելու և ոլորտի զարգացմանը խոչընդոտող բնույթի մասին: Նշված խնդրի լուծման նպատակով օրենսդրական նախագծերի փաթեթով առաջարկվել են նոր կարգավորումներ, որոնք կներկայացվեն ստորև՝ գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2. Դատարանի նախաձեռնությամբ նշանակված հաշտարարության իրականացման դեպքում հաշտարարի վարձատրության վերաբերյալ



1.3. Այլ հարցերի կարգավորման անհրաժեշտություն

Ներկայումս Օրենքով հստակ նախատեսված չեն հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության կառավարման մարմինների ձևավորման կարգը, գործառույթները և լիազորությունների շրջանակը: Օրենքում բացակայում են նաև որոշակի իրավակարգավորումներ՝ կապված հաշտարարներին կարգապահական պատասխանատվության ենթարկման, ռեեստրի վարման, հաշտարարների թեկնածուի ընտրության և նշանակման հետ:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) փաթեթով առաջարկվում են Հայաստանի Հանրապետությունում հաշտարարության ինստիտուտի բարեփոխմանն ուղղված իրավակարգավորումներ:

2.1. ««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ սույն ենթավերնագրում նաև՝ Օրենքի նախագիծ)

Օրենքի նախագծով առաջարկվել են հետևյալ իրավակարգավորումները.

2.1.1. *Կողմերի փոխադարձ համաձայնության առկայության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում առցանց հաշտարարության իրականացման հնարավորության նախատեսում.*

2.1.2. *Որոշ ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարության նախատեսում և անվճար չորս ժամ հաշտարարությունից հրաժարում*

Մասնավորապես, Օրենքի նախագծով առաջարկվել է ամուսնալուծության, երեխայի բնակության վայրի որոշման, ալիմենտի (ապրուստավճար) բռնագանձման, ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման, ծնողական իրավունքների իրականացման, երեխայի մերձավոր ազգականների՝ երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու, երեխայի տեսակցության կարգ սահմանելու, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ գործերով մինչև դատարան դիմելը նախատեսել պարտադիր հաշտարարության պահանջ: Օրենքի նախագծով առաջարկվել են նաև նշված կանոնի գործողության որոշ բացառություններ:

Հարկ է նշել, որ 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1441-Լ Կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության Հավելված 1-ով հաստատված «Քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսդրության բարեփոխում» վերնագրված ռազմավարական նպատակի իրագործման շրջանակներում նախատեսվել է «Քաղաքացիական դատավարությունում պարտադիր հաշտարարության դեպքերի սահմանում» ռազմավարական ուղղությունը: Մասնավորապես, առաջարկվել է քննարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված անվճար հաշտարարություն նշանակելու իրավական լուծումները՝ դիտարկելով որոշակի իրավահարաբերությունների (ընտանեկան, աշխատանքային, բանկային և այլն) վերաբերյալ վեճերով դատարանի կողմից անվճար հաշտարարություն նշանակելը պարտադիր դարձնելու իրավական հնարավորությունը: Հարկ է նշել, որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկայումս արտոնագրված հաշտարարներից միայն քչերն են փաստացի զբաղվում հաշտարարությամբ, ինչը կարևոր հանգամանք է պարտադիր հաշտարարության ներդրման դեպքում, քանի որ գործերի ծանրաբեռնվածությունը հաշտարարների վարույթում կարող է հանգեցնել դրանց սեղմ ժամկետներում քննության խոչընդոտների: Այդ պատճառով նախագծով սահմանվել է, որ պարտադիր հաշտարարության վերաբերյալ դրույթները ուժի մեջ են մտնելու

հրապարակման պահից մեկ տարի անց: Կարևոր է նաև նշել, որ նախագծի մշակման փուլում դիտարկվել է ինչպես հարևանային (նաև նեգատոր հայցերով վեճերը), այնպես էլ աշխատաքային վեճերի համար պարտադիր հաշտարարություն նախատեսելու հնարավորությունը: Սակայն, հաշվի առնելով վերը թվարկված հանգամանքները, մասնավորապես՝ հաշտարարների թվով քիչ լինելը, այս փուլում որպես պիլոտային տարբերակ նախատեսվել են միայն ընտանեկան վեճերը, իսկ հաշտարարների թիվը բավարար չափով համալրելուց հետո կարող է քննարկվել նաև այլ վեճերով պարտադիր հաշտարարություն նախատեսելու հարցը:

Վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ որպես «վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում» նպատակի ապահովմանն ուղղված միջոցառման ակնկալվող արդյունք նախատեսվել է ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարության ներդրումը:

2.1.3. *Մինչև օրենքի փոփոխության ուժի մեջ մտնելը արտոնագրված հաշտարարների վերապատրաստում*

Մասնավորապես, հաշտարարության ինստիտուտի բարեփոխման կարևորագույն բաղադրիչներից է հաշտարարների ուսուցման կազմակերպումը: Ըստ նախագծի՝ համապատասխան ուսուցման դասընթացը պետք է կազմակերպվի Արդարադատության նախարարի հաստատած ծրագրին համապատասխան: Նշված ծրագրում ակնկալվում է նախատեսել հաշտարարի մասնագիտական հմտությունների զարգացմանը նպաստող և միջազգային լավագույն փորձի հիման վրա ընտրված դասընթացներ: Այս առումով կարևոր է նշել, որ Օրենքի նախագծի անցումային դրույթներով նախատեսվել է կարգավորում, ըստ որի՝ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, մինչև օրենքի ուժի մեջ մտնելը արտոնագրված հաշտարարների համար Արդարադատության նախարարությունը կազմակերպում և իրականացում է պարտադիր վերապատրաստման դասընթացներ:

Նշված իրավակարգավորման նախատեսման նպատակն է մինչև օրենքի փոփոխության ուժի մեջ մտնելը արտոնագրված հաշտարարներին միջազգային լավագույն փորձի հիման վրա մշակված ուսուցման դասընթացի նախագծին համապատասխան վերապատրաստելը:

2.1.4. *Հաշտարարների ռեեստրի և նշանակման կարգի վերաբերյալ որոշ առանձնահատկությունների նախատեսում*

Այսպես, Օրենքի նախագծով նախատեսվել է իրավակարգավորում, համաձայն որի՝ արտոնագրված հաշտարարների ռեեստրում (այսուհետ՝ ռեեստր) ընդգրկվում են բոլոր հաշտարարները: Այս առումով հարկ է նշել, որ Օրենքի նախագծով առաջարկվում է նշված ռեեստրում առանձնացնել երկու ցանկ: Մասնավորապես, կողմերը հաշտարարի թեկնածու չունենալու դեպքում կարող են դիմել Արդարադատության նախարարություն՝ հաշտարար նշանակելու պահանջով: Բացի այդ, ըստ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի՝ կողմերի միջնորդությամբ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց սկսելիս հաշտարարի թեկնածության վերաբերյալ առաջարկ չներկայացվելու կամ դատարանի նախաձեռնությամբ հաշտարարություն նշանակելու դեպքում դատարանը մեկօրյա ժամկետում հաշտարարի թեկնածություն ներկայացնելու պահանջագիր է ներկայացնում Արդարադատության նախարարություն: Օրենքի նախագծով սահմանվել է, որ բոլոր այն դեպքերում, երբ Արդարադատության նախարարության կողմից պետք է նշանակվի հաշտարար կամ ընտրվի հաշտարարի թեկածու՝ դատարան ներկայացնելու նպատակով, ապա հաշտարարի ընտրությունը պետք է իրականացվի ռեսստրում առանձնացված հաշտարարների թվից: Սակայն այն գործերով, որոնց դեպքում նախատեսված է պարտադիր հաշտարարություն, հաշտարարի ընտրությունը կատարվում է ռեեստրում առանձնացված հաշտարարների հատուկ ցանկից: Ընդ որում, նշված գործերով հետագայում դատարանի կողմից հաշտարարություն նշանակվելու դեպքում ևս ընտրությունը պետք է կատարվի պարտադիր հաշտարարների ցանկից: Հարկ է նշել, որ նշված ցանկերում հաշտարարները կարող են ընդգրկվել իրենց դիմումի համաձայն (առկա է միաժամանակ երկու ցանկերում ընդգրկվելու հնարավորություն):

2.1.5. *Հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության կառավարման հարցերի և հաշտարարներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգի հստակեցում*

Օրենքի նախագծով նախատեսվել են հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության կառավարման մարմինները, դրանց ձևավորման կարգը, լիազորությունների շրջանակը և իրականացման կարգը: Նախատեսվել են նաև հաշտարարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առիթները, հիմքերը, կարգապահական վարույթի առանձնահատկությունները: Նախատեսված նոր իրավակարգավորումները կնպաստեն հաշտարարության ինստիտուտի կայացմանը:

2.2. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ

Նշված նախագծով սահմանված իրավակարգավորումները մեծապես պայմանավորված են «Հաշտարարության մասին» օրենքում կատարվող փոփոխություններով: Մասնավորապես, նախատեսվել են դրույթներ դատական ծախսերը կողմերի միջև բաշխման կարգի, հայցադիմումին ներկայացվող պահանջների և կցվող փաստաթղթերի և այլ հարցերի վերաբերյալ:

2.3. ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ

Նախագծով սահմանվել են արտոնագրված հաշտարարների որակավորման ստուգմանը մասնակցելու համար պետական տուրքի չափը, ինչպես նաև պետական տուրքի նվազեցման և վերադարձման նոր դեպքեր:

2.4. «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ

Նախագծում լրացում անհրաժեշտ է կատարել լրացում՝ հաշվի առնելով «Հաշտարարության մասին» օրենքում պարտադիր հաշտարարության վերաբերյալ իրավակարգավորումների նախատեսումը:

2.5. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ

Նախագծով սահմանվել է հաշտարարին որպես վկա հարցաքննելու արգելք՝ հաշտարարական գաղտնիքի ապահովման նպատակով:

2.6. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ

Նախագծով սահմանվել է հաշտարարի հնարավորությունը կիրառել կողմերի միջև կնքված պայմանագրով սահմանված ծանուցման կարգը, եթե կողմերը պայմանագրով ուղղակիորեն նախատեսել են նման հնարավորություն:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է բարեփոխել հաշտարարության ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում, նախատեսել օրենսդրական խթաններ ուղղված հաշտարարության՝ որպես վեճերի այլընտրանքային միջոցի զարգացմանը, ինչը կհանգեցնի նաև դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը:

4.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի կողմից:

5. ««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում

կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների ընդունման կապակցությամբ պետական բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

««Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում առաջանում է ծախսերի ավելացման անհրաժեշտություն:

6. «Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ».

Նախագծերի ընդունումը բխում է 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ Կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից (Հավելված 1-ով հաստատված «Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում» վերնագրված ռազմավարական նպատակի շրջանակներում), ինչպես նաև Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշումից: Մասնավորապես, նշված որոշման Հավելված 1-ում Արդարադատության նախարարության թիվ 8-րդ նպատակի («Վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացում») միջոցառումների թվում է «Հաշտարարության մասին» օրենքի վերանայմանն ուղղված օրենսդրական փաթեթի մշակումը: